

Կազմված է « 19 » « 01 » 2020թ.  
Բաղկացած է 5 (հինգ) թերթից  
Ընդամենը՝ 2 (երկու) օրինակ  
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Արցախի Ազատություն Կուսակցության  
19.01.2020թ. կայացած հիմնադիր  
համագումարի որոշմամբ  
/թիվ 01 արձանագրություն/

Նախագահ՝



ԳՐԱՆՅՎԱԾ Է՝

ԱՀ արդարադատության նախարարության  
աշխատակազմի իրավաբանական անձանց  
պետական ռեգիստրի գործակալության  
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման ամսաթիվ՝ « 31 » « 01 » 2020թ

Գրանցման համար 443. 172. 1112661

ՀՎՀՀ 90046441

Ջ. Ռուբենյան



Գործակալության պետ՝ Գ. Մարսիմովա



**ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ**

**ԾՐԱԳԻՐ**

Արցախի Ազատություն Կուսակցության նպատակներն են՝ պաշտպանել ԱՀ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, աջակցել պետականության ամրապնդմանը ու զարգացմանը, նպաստել սոցիալական և իրավական պետության կերտմանը, վերացնել կոռուպցայի նախադրյալները պետական և տեղական կառավարման համակարգում, ապահովել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ռեալ տարանջատումը և վերջիններիս անկախ գործունեությունը: Նպաստել քաղաքական համակարգի արդիականացմանը, որը կիրականացնի քաղաքական շարունակական սերնդափոխություն ու կապահովի կայուն աճ և զարգացում: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ նախադրյալները գտնվում են՝ աշխարհասփյուռ հայ հասարակության համախմբված ներուժի արդյունավետ կիրառման մեջ:

Արցախի Ազատություն Կուսակցությունը իր գործունեության գերխնդիրն է համարում.

ԱՀ անկախ պետականության ամրապնդումն ու զարգացումը, նրա տարածքային ամբողջականությունը,

իշխանության թափանցիկ գործունեության և հաշվետվողականության ապահովումը:

Իշխանության հանդեպ վստահության վերականգնումը, պահպանումը և ամրապնդումը:

Միյուրօրի՝ հայ համայնքների ներուժի նպատակային ու արդյունավետ օգտագործումը

Նպաստել մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների լիիրավ կայացմանը և կատարելագործմանը՝ ի շահ Արցախի Հանրապետության քաղաքացու:

## 1. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1.1 Արցախի Ազատություն Կուսակցությունը նպատակ ունի Արցախի Հանրապետությունում կառուցել ազատ տնտեսական համակարգ՝ միննույն ժամանակ կարևորելով պետության կարգավորող դերը տնտեսության արդյունավետության բարձրացման, կայուն աճի, սոցիալ-տնտեսական արդարության և այլ տնտեսական կառուցակարգերի մշակման ապահովման գործում: Այս նպատակներին հասնելու համար Արցախի Ազատություն Կուսակցությունը կարևորում է.

1.2 Տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ հավասար հնարավորությունների երաշխավորում:

1.3 Փոքր և միջին ձեռնարկատիրությունների խթանող հարկային քաղաքականության իրականացում:

1.4 Սահմանամերձ համայնքներում ձեռնարկատիրական գործունեության խթանում և արտոնյալ պայմանների տրամադրում:

1.5 Շրջանների տնտեսական համաչափ զարգացում:

1.6 Տնտեսության հեռանկարային ճյուղերի մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիաների, վերականգնվող էներգետիկայի, այլընտրանքային էներգետիկայի, թեթև արդյունաբերության և այլ ձեռներեցությունը խթանող դրամավարկային և հարկային արդյունավետ քաղաքականության իրականացում և խրախուսում:

1.7 Ընդհանուր վարկային քաղաքականության վերանայում՝ տոկոսադրույքների նվազեցում:

1.8 Կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ պայքար:

1.9 Ներդրումների իրականացման և ապահովման ուղղությամբ սփյուռքի հետ համակողմանի և հետևողական աշխատանքի իրականացում:

1.10 Տեղական ձեռնարկատիրական գործունեության խթանում և խրախուսում:

## **2.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ**

2.1 Կրթությունը, գիտությունը և մշակույթը Արցախի մտավոր և հոգևոր ներուժն է ու զարգացման հիմքը, ինչը ենթադրում է պետության և հասարակության հատուկ վերաբերմունք կրթությանը, գիտությանը և մշակույթին:

Արցախի Ազատություն Կուսակցության խնդիրներն են՝

2.2 Հանրակրթական ուսուցման ծրագրերի և մեթոդների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին, առողջ սերնդի հայեցի դաստիարակություն՝ հիմնված ազգային և համամարդկային արժեքների վրա:

2.3 Կրթության պետական ֆինանսավորման ավելացում:

2.4 Ուսուցչի դերը կարևորել հասարակության մեջ, դարձնել այն պատվաբեր և նրան համարժեք վարձատրել:

2.5 Կրթության ոլորտում նորարական տեխնոլոգիաների ու մեթոդների ներդրում:

2.6 Որակյալ և մրցունակ մանկավարժական կադրերի ապահովում:

2.7 Կրթության ոլորտում կոռուպցիայի ռիսկերի նվազեցում, անհիմն դրամահավաքի և կաշառակերության վերացում:

2.8 Գիտական և բուհական համակարգերի բարեփոխում և ինտեգրացում համաշխարհային համակարգերին:

2.9 Գիտության ասպարեզում գիտնականների և երիտասարդ գիտաշխատողների գյուտերի պետական խրախուսում: